

ԷԶԵՐ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՒՆ

Իր երկարատև կեանքի ընթացքին, 20րդ դարու հայ գրականութեան մեծերէն մէկը՝ Կոստան Զարեանը (1885—1969) լայն նամակագրութիւն պահած է գրական, մշակութային թէ քաղաքական գործունէութեամբ յայտնի հայ թէ օտար բազմաթիւ անձնաւորութիւններու հետ: Իր գրած թէ ստացած նամակներէն շատերուն հակատագիրը, ցաւօք, անյայտ է տակաւին: Անոնք մեծապէս կրնան օգնել նոր լոյս սփռելու իր կեանքին ու գործին վրայ:

Ստորեւ հրատարակութեան կը յանձնենք նամակներու երկու շարքեր, հասցէագրուած՝ Իրանահայ բանաստեղծ Դեւին (Մարգար Ղարաբէգեան, 1901—1975) եւ ֆրանսահայ վիպագիր Հրաչ Զարդարեանին (1896—1986), Զարեանի կեանքի վերջին տասնամակներու ընթացքին: Թէև այլ մանրամասնութիւններ յայտնի չեն, սակայն նամակներէն կ'երևի, թէ Զարեան ու Դեւ հանդիպած են Իտալիա ու Հայաստան՝ վերջինիս շրջագայութիւններու ընթացքին, եւ բարեկամական կապ մշակած են: Զարդարեանի հետ կապը զուտ նամակագրական եղած է: Զարեանի ստացած պատասխանները թերեւս իր անձնական արխիւին մէջ գտնուին: Նամակները կը հրատարակենք նոյնութեամբ, յարգելով լեզուական եւ ուղղագրական բոլոր շեղումները, ներառեալ՝ Դեւին ուղղուած վերջին նամակին խառն ուղղագրութիւնը: Բնագիրները պահուած են Ծ. Զարեանի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ (Դեւի ֆոնտ, թիւ 239 եւ Հ. Զարդարեանի ֆոնտ, թիւ 63): Դեւին ուղղուած առաջին շորս եւ վեցերորդ նամակները, ինչպէս աւ Զարդարեանին ուղղուած առաջին երկուքը՝ մեքենագիր են, մնացեալները՝ ձեռագիր:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Պուէնոս Այրես

ԴԵՎԻՆ
Ա.

20-9-48

FORIO D'ISCHIA
(NAPOLI) ITALIA

Սիրելի Պր. Դեւ,

Լաւ արիթ ղրկեցիք ինձ ձեր բանաստեղծութիւնների հատորը¹, այդքան լաւ տպագրուած եւ այդպիսի գեղեցիկ բովանդակութիւնով: Ահա քանի ժամանակ է հիւանդ եմ, անկողնի մէջ, հեռուոր այս կղզում, ուստի իսկական վայելք էր ինձ համար զգալ ձեր թարմ հոգին եւ ձեր պարզ երգը:

Շատ լաւ մասեր կան. օժտուած իսկական գեղեցկութիւնով, քնարերգական թարմութիւնով եւ անմիջականութիւնով:

Շնորհաւորում եմ ձեզ եւ շնորհակալ եմ որ ինձ շէք մոռացել: [Մի] բարեկամ իտալացի երաժիշտ, որ այցելութեան էր եկել, սեղանի վրայ տեսաւ նոտաները, ձեռքը առաւ եւ երգեց: Յուզիչ էր:

Դէ, ջերմ բարեւներ: Մնամ սիրով

Կ. Զարեան

Բ.

27-12-48

ՅՕՐԻՕ ԴԻՍԿԻԱ

Սիրելի բարեկամ,

Զգիտեմ ինչպէս արտայայտեմ իմ շնորհակալութիւններս ձեր ղրկած գե-

¹ Դեւ, իմ երգերը, Քեհրան, 1947:

ղեցիկ եւ արտայայտիչ ջրանկարի համար: Ձեր բանաստեղծութիւններից յետոյ, որ ցոյց էին տալիս մի գեղեցիկ տաղանդ, հաճոյքը մեծ է վայելելու ձեր նկարչական տաղանդը, որի մասին լսել եւ կարդացել էի: Արեւելքը եւ մանաւանդ հինաւուրց Պարսկաստանը նիւթերի մեծ շտեմարան են դիտող նկարիչի համար եւ նաեւ ներկայանում են մի շարք խորհրդածութիւնների առարկայ, ինչ-էին-ինչ-են-եղելի թելադրած մեւամաղձութիւնով պարտադրած:

Վերջերս, իտալական մի օրաթերթում մի շարք յօդուածներ կարդացի Քէյ-բանից գրած: Ուրախ չէին եւ Պարսկաստանը այցելելու իմ վաղեմի ցանկութեանս վրայ պաղ շուր թափեցին: Անշուշտ, շատ բաներ մեզ աւելի հասկանալի են քան իտալացուն, բայց, այն ու ամենայնիւ, երբ վերջիշում եմ մանկութեան հասակին տեսած շախսէյ-վախսէյները՝ մար[մ]նիս վրայից դժընդակ մի սարսուռ է անցնում:

Իմացայ, որ իրանահայ երիտասարդութեան մէջ բաւականի մեծ հետաքրքրութիւն կայ գրականութեան եւ արեստի շուրջ եւ որ այնտեղ լոյս են տեսնում որոշ հրատարակութիւններ: Պիտի ուզէի, եթէ կարելիութիւն կայ, որ ինձ դրկէին այդ հրատարակութիւնները: Այստեղ, պէտք չէ մոռանալ, ապրում եմ մի կղզու վրայ, բառի իսկական այդ իմաստով, եւ հայկական իրականութիւններից բոլորովին կտրւած եմ:

Իմ շնորհավորութիւններս տօների առթիւ: Մաղթում եմ ձեզ բեղմնաւոր աշխատանք եւ ձեր իղեալի իրագործումը:

Մնամ սիրով

Կ. Զարեան

Գ.

26-8-49

ՅՕՐԻՕ

Սիրելի Դեւ,

Ձեր նամակը միայն այսօր ստացայ: Մի երկու օրով մեկնել էի Պոմպէին եւ Պեստումը այցելելու յամար, ինչ որ այս տաքերին բաւականի յոգնեցուցիչ էր, բայց, ինչպէս միշտ, շատ հետաքրքրական: Չգիտեմ նեպապոլիս եղած ժամանակ դուք այցելեցի՞ք այդ տեղերը, եւ, եթէ Պոմպէի գնացիք, կարողացա՞ք այսպէս կոչուած «խորհրդների Վիլլան» տեսնել: Առհասարակ, արեւստագէտի համար, սխալ է Իտալիան այցելել առանց նախապէս պատրաստելու եւ որոշ ծրագիր կազմելու:

Նկարիչ Օննիկ Աւետիսեանի² գրքի եւ նամակի մասին ոչինչ չեմ յիշում: Կարող է պատահի որ «Հայրենիքը» ինձ գիրքը եւ նամակը ղրկել է բայց այն ժամանակներում ես սաստիկ հիւանդ էի եւ լաւ չէի գիտակցում ինչ էր անցնում շուրջս: Գրքերս ցրած լինելով աշխարհի շորս մասերում, որոնց մէջ եւ նիւեորկը, չեմ կարող ասել եթէ ստացել եմ թէ չէ՞: Ամենայն դէպս, յայտնեցէք Պար. Աւետիսեանին իմ շնորհակալութիւններս եւ թող ներողամիտ գրտընւի եթէ իր նամակին չեմ պատասխանել:

Աղջիկս⁴ այժմ իր երեխաների հետ գտնւում է ամառանոցում եւ, եթէ չեմ

² ՕՆՆԻԿ Աւետիսեան (1898—1974), եգիպտահայ նկարիչ եւ արուեստաբան: Կ'ակնարկէ «Քորձ մը հայ տպագրական տառերու բարեփոխութեան եւ արդիականացման» հատորին (Գահիրէ, 1946):

³ Օ. Աւետիսեանի նամակը, գրուած՝ 2 Էփրոպոլիս, 7 Նոյեմբեր 1946ին, տե՛ս Գրականութեան եւ Արուեստի Քանգարան, Կ. Զարեանի Ֆոնտ, թիւ 8:

⁴ Լուսրդ Զարեան (1917), իտալահայ քանդակագործուհի:

սխալում, միայն Սեպտեմբերի վերջերս պիտի գայ Հոռոմ, ուր դասաւանդում է նկարչական Ակադէմիայում: Երբ լուր ստանամ իր ժամանելու մասին, անմիջապէս ձեռք կը գրեմ:

Հոռոմում կան հայ վարդապետներ, որոնք կարող են ձեռք օգտակար լինել, մանաւանդ Մխիթարեանները: Գիտեմ որ բնակում են Աւետինօի մօտերը, բայց ճիշտ հասցէն մոռացել եմ: Եթէ գնաք Սէն Նիկոլա Տօլենտինօ հայ եկեղեցին, որ գտնուում է նոյն անունը կրող փողոցում, այնտեղ ձեռք բոլոր տեղեկութիւնները կտան:

Աղաբաբեաններին գտա՞ք:

Շատ բարեւներ մեր ամէնքի կողմից:

Կ. Զարեան

Դ.

23-11-50

Սիրելի բարեկամ,

Անցեալ օր ստացայ ձեր ղրկած Ֆիրդուսու թարգմանութիւնը, որ մասամբ ինձ ծանօթ էր եւ այսօր էլ զաւկիս⁵ նամակի մէջ ձեր խաղողանուշի պատրաստութեան մասին տւած խորհուրդները: Շատ շնորհակալ եմ: Այստեղ խաղողը արդէն վերջացել է եւ միայն եկող տարի կարելի պիտի լինի փորձել: Պիտի ուզէի մի նոր բան սովորեցնել այստեղի այգեպաններին, որոնք զաղափար շունեն այդ տեսակ պատրաստութիւնների մասին: Ոչ իսկ Սիկիլիայում, ուր սակայն յունական բոլոր աւանդութիւնները դեռ կենդանի են:

Ինչպէս երեւում է, անցեալ տարւայ ձեր ճամբորդութիւնից [յ]ետոյ դէպի Եւրոպա, այս տարի մտադրութիւն շունէք նորից այս կողմերը վերադառնալու: Չեմ կարծում արժէ իսկ: Եւրոպան տխուր է եւ մտահոգ եւ ոչ ոք չի իմանում թէ վաղը ինչ կարող է պատահի:

Ինչպէ՞ս են ընթանում ձեր գրական աշխատութիւնները եւ, առհասարակ, ինչո՞վ են զբաղւած պարսկահայ մեր գրականագէտները եւ բանաստեղծները: Հետաքրքրութեամբ պիտի ուզէի ծանօթանալ նոր հրատարակութիւնների հետ: Զերմ բարեւներ իմ եւ նաեւ կնոջս կողմից:

Կ. Զարեան

Ե.

29-7-51

Տօրիօ

Ազնիւ բարեկամ,

Շատ շնորհակալ եմ ձեր սիրալիր նամակի համար: Նւարդիկս իսկապէս արժանի է յաջողութիւն ունենալու, ես ինքս տեսա[յ], որ շատ յառաջադիմութիւն է արել եւ որ իր մերձեցումը դէպի իր արեւատը վերին աստիճան լուրջ է:

Երբեմն հանդիպում եմ ձեր բանաստեղծութիւններին, ինչ որ ցոյց է տալիս, որ աշխատում էք եւ ձեր ստեղծագործական թափը միշտ վառ է: Իսկ ինչպէ՞ս է գնում նկարչութիւնը, յուսամ եւրոպական ճամբորդութիւնը նոր գաղափարներ տաւ ձեռք եւ լայնացրեց ձեր մտաւոր հորիզոնը:

Շատ բարի էք յիշելու խաղողի քաղցրեղէնի մասին: Նախ խոստովանեմ, որ տգիտութիւնս մեծ է եւ օտաւ բառը շեմ հասկանում, բարի կլինէ՞ք երկ-

⁵ Զարեանի աւագ որդին՝ Վահէ (1913—1985), 1940—1950 թուականներուն ապրած է Պարսկաստան:

տողով ասել ինձ թէ ֆրանս. կամ անգլիերէն ինչ է նշանակում: Ջերմ բարեւ-
ներ նաեւ իմ կնոջս կողմից:

Կ. Զարեան

Ձ.

19-2-62

Via Romana Bana, 128

Ruta

(Prov. di Genova)

Italia

Միրելի բարեկամ,

Երեւակայեցէք ձեր Մննդեան շնո[ր]հաւորական գեղեցիկ բացիկը եւ ձեր նամակը նախատական յօդածներով եւ միայն այսօր ստացայ: Հարցը նրա-
նումն է, որ Հայ[ա]ստանից վերագառնալուց ի վեր ես ապրում եմ Իտալիա-
յում եւ շատ քիչերը գիտեն իմ հասցէն: Ուստի ձեր նամակները մնացած են
անյայտ անկիւններում մինչեւ որ մէկը գլխի է ընկել եւ դրկել է ինձ:

Շատ շնորհակալ եմ ձեր յայտնած զգացմունքների համար, որոնք ցոյց
են տալիս ձեր ազնուութիւնը եւ ազգային գիտակցութիւնը: Այդ օրի հասած
ենք, որ նոյնիսկ իր սեփական հայրենիքը սիրող եւ հասկացողը ենթարկում
է լուծանքների [sic], նոյն մարդկանց կողմից, որ մի քանի ամիս առաջ ինձ
բարձրացնում էին երկինք⁶: Ասեմ ձեզ, որ ես ոչ նրանց գովասանքներն եմ
երբէք լուրջօրէն առել եւ ոչ իրենց հայհոյանքները տպաւորում են ինձ: Հա-
յաստանը իմ սեփական աչքերով տեսայ, քննեցի, զննեցի եւ ա՛յն է ինչպէս
ներկայացրել եմ: Եւ իբրեւ գրագէտի իմ նպատակս պիտի լինի ամէն կերպով
աջակցել նրա վերաշինութեան եւ պաշտպանել մեր ժողովրդի շահերը: Եւ ես
սրտի խորքից հրաւիրում եմ բոլոր եղբայրակիցներս միանալ այդ սրբազան
գործին եւ ստեղծել մի՛ հայութիւն մի՛ երկրի մէջ:

Գարնան հաւանական է, որ նորից այցելեմ Հայաստանը եւ պիտի ուզէի,
որ դրսի ակնաւոր եւ հայրենասէր մտաւորականներից շատերը միանային
ինձ եւ իրենց աչքերով տեսնէին այն մեծղի գործը, որ կատարում են այնտեղ:

Գիտեմ որ ձեր երկրում տիրող վիճակը շատ նպաստաւոր չէ այդպիսի
ճամբորդութիւնների համար: Պէտք էր, որ նրանք որ կարող են, միանգամայն
տեղափոխուէին երկիր եւ այնտեղ շարունակեն իրենց գրական գործունէու-
թիւնը, որին ամէն կերպով աջակցում են իշխանութիւնները եւ ստեղծում նը-
րանց համար նպաստաւոր պայմաններ:

Սեղմում եմ ձեր ձեռքը եւ մնում եմ լաւագոյն բարեկամական զգաց-
մունքներով ձեր

Կ. Զարեան

⁶ Կ'ակնարկէ 1961 թուականի Զարեանի Հայաստան այցին ու իր յայտարարութիւններուն հետեւանքով Սփիւռքի մէջ ծագած բանավէճին: Գրագէտը ենթարկուած է յարձակումներու՝ Ն. Յ. Գաշնակցութեան մամուլի կողմէ, խորհրդահայ իրականութեան մասին իր գրական գնա-
հատականներուն ու այդ կուսակցութեան հասցէին յայտնած ժխտական կողմնորոշումին առիթով:

2-4-64

Արտվ՛ան փողոց, 17

մուտք 2-րդ

բնակ.— 14

Սրբեան I

Սիրելի բանաստեղծ եւ բարեկամ,

Պէտք է ներէք որ ձեր սիրալիր եւ զգացած նամակին այդքան ուշ եմ պատասխանում. կ'հասկանաք հոգեկան եւ մտային վիճակս⁷: Նաեւ վերջերս մեկնեցի մի երկու ամիսով արտասահման եւ վերադարձիս նորից ինձ անհանգիստ զգացի: Հիմա լաւ եմ եւ հետաքրքրութեամբ դիտում եմ մարդկանց եւ նրանց բարքերին: Աշխատում եմ:

Յուսամ այս ամառը կամ աւելի ուշ նորից կ'այցելէք մեր Հայաստանը եւ առիթը կ'ունենանք զրուցելու: Բարեւեցէք իմ բարեկամներին եւ համակիրներին եւ ընդունեցէք իմ լաւագոյն բարեւները:

Ձեր

Կ. Զարեան

Ը.

29-5-64

Սիրելի Պրն. Դեմվ,

Ճիշտ այսօր ստացայ ձեր սիրալիր նամակը եւ լուսանկարը: Այդ նամակին ես ձեզ առանձին կ'պատասխանեմ: Հիմա ուզում եմ խնդրել ձեզ ինչքան կարելի է շուտ պատասխանէք այս նամակում ներփակ երկտողին, որ վաղուց է տեւել են ինձ մեր ճարտարապետները: Գեվրիկյանին⁸ երեմի ճանաչել [sic] էք: Ահա պիտի հրատարակեն հայ ծննդով ճարտարապետների մասին մի գիրք եւ ուզում են որ նա էլ մէջը լինի:

Առ այժմ շատ ջերմ բարեվներ եմ խորին շնորհակալություններ:

Կ. Զարյան

ՀՐԱԶ ԶԱՐԳԱՐԵԱՆԻՆ

Ա.

6-10-56

Koschatgasse 110

Wien, XIX

Սիրելի Զարդարեան,

Այսօր երեկոյեան, Մայլքուրգից վերադարձիս, սեղանիս վրայ գտայ ձեր նամակը եւ ձեր գրքերը⁹: Յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս:

Մտածեցի, որ մինչեւ որ կարդամ— եւ կարդալու համար շատ ժամանակ չունեմ, որովհետեւ ամբողջովին կլանւած եմ շատ մեծ աշխատութիւնով¹⁰,

⁷ 1964ի սկիզբը մահացած էր Զարեանի երկրորդ կինը՝ նկարիչ Յրենսիս Պրուբսը, ԱՄՆի մէջ:

⁸ Գարբիէլ Կէվրիկեան (1900—1970), ֆրանսահայ ճարտարապետ, որ շրջան մը ապրած է Իրան:

⁹ Խօսքը կը վերաբերի «Մեր կեանքը» (Փարիզ, 1934) եւ «Որբացող մարդիկ» (Փարիզ, 1954) վէպերուն:

¹⁰ Խօսքը կը վերաբերի «Գիրք դիցազներգութեանց» վիպերգներու շարքին, որ լույս տեսած է յետմահու (Սրուսազէմ, 1978):

եւ մինչեւ որ գրեմ՝ եւ գրելու համար պիտի սպասեմ դադարի՝ պիտի օրեր անցնեն եւ գրքի լոյս տեսնելը պիտի ուշանայ:

Միւս կողմից չպիտի ուզէի կարծէիք, որ մերժումս թելադրուած է չկամութիւնից կամ որեւէ ուրիշ դիտումներից: Ընդհակառակը, իմ համակրութիւնս ձեր կողմն է, որովհետեւ դուք պատկանում էք այն հազագիւտների շարքին, որոնք գրականութիւնը կապում են մտքի եւ հոգեկան խնդիրների հետ: Ինչ որ ուրախալի երեւոյթ է փոշիացող, ջրալի երգիծաբանութեամբ եւ խանութպանական հաշիւներով բզկտուած մեր այս արտահայտաստանեան միջավայրում:

Երբ գիրքը լոյս տեսնի, կարելի է առիթ գտնեմ նրա մասին արտայայտելու աւելի մանրամասն եւ աւելի խոր կերպով:

Անշուշտ, վերապահումներ էլ ունեմ. լեզուն օրինակի համար եւ այլն: Բայց այդ մասին ուրիշ անգամս:

Խնդրում եմ ինձանից չնեղանալ: Ձեր հօր լուսաւոր յիշատակը¹² միշտ ինձ հետ է եւ ձեզ համար կրած զգացմունքներինս մէջ էլ նա ներկայ է:

Մնամ ձեր

Կ. Զարեան

Բ.

13-1-58

Via Aurelia Orient S. Rocco

I casa Scheuter int. 23

Rapallo

(Italia)

Միրելի Զարդարեան,

Ստացայ ձեր «Ժամանակ եւ խորհուրդ իւր»՝ ձեր գեղեցիկ հեղինակութիւնը¹³, որ կարդում եմ մեծ հետաքրքրութեամբ: Խոր էջեր կան, որ հազագիւտ են մեր գրականութեան մէջ: Լաւ եւ անակնկալ նւէր էր այս նոր տարւայ համար, մանաւանդ որ ահա գրեթէ հինգ ամիս է, որ հայ թերթի կամ գրքի երես չեմ տեսել եւ ի՞նչ է կատարում հայերի աշխարհում՝ գաղափար շունեմ:

Բապալտն գեղեցիկ վայր է, ինչպէս ձեր նիւսը, բայց աւելի խաղաղ ձրմեռայ ընթացքին: Ապա Զենովան շատ մօտ է եւ այնտեղ կարելի է անել անհրաժեշտ գնումները: Զգիտեմ ծանօթ էք Իտալիային:

Վիեննան, կլիմայի պատճառով թողնելուց յետոյ, մի ժամանակ մտա-

¹¹ Գիրքը լոյս տեսած չէ: Զարեան այս նամակին առիթով կատարած է օրագրային հետեւեալ գրառումը (29 Սեպտեմբեր 1956).— «Այսօր, անակնկալ կերպով, երկու գիրք եւ մի նամակ եկաւ գրագէտ Հրայ Զարդարեանից: Խնդրում է որ իր նոր գրքի համար երկու երես առաջարան գրեմ: Այ քեզ բան... Այդքան տարիներին երբէք ինձ նամակ չգրած եւ գիրք չուղարկած մի մարդ առաջարան է ուղում: Յանուն ինչի՞» Կարդացի մի քանի էջ՝ շինծու, միխթարեան կնճռոտած եւ վերացական լեզու, մտքերը ասես աժան տեղեր, որով ամէն մի աժան ֆրանսիական թերթ լեցած է: Եւ մանաւանդ այդ ամէնը ոչ մի կապ չունի մեր ներկայ կեանքի հետ եւ անցած-գարձածի հետ: Փաղաքաւարի [sic] եւ մի քիչ էլ բռնազրոսիկ մերժողական պատասխան տւի նրան» (Վաստան Զարեան, Նաւատօմար, «Նորք», 2, 1994, էջ 38):

¹² Հ. Զարդարեան Մեծ Եղեռնի զոհ արձակագիր Ռուբէն Զարդարեանի (1874—1915) որդիներէն մէկն էր:

¹³ Խօսքը կը վերաբերի «Ժամանակ եւ խորհուրդ իւր» (Փարիզ, 1955) խոհերու հատորին: Գիրքը, որ կը գտնուի Զարեանի անձնական արխիւին մէջ, մակագրուած է հետեւեալ կերպով. «Վաստան Զարեանին՝ հայ դպրութեան աներկրորդ մեծութեան, գազաթ՝ միջազգային գրական լեռնաշղթային մէջ, անասման քրանչացումով՝ Հրայ Զարդարեան. Նիւս, 28.12.57»:

ծեցի գալ նիսում հաստատել, մանաւանդ որ Սան Ռէմօ էի ուստի շատ մօտ: Բայց այն շրջանին Ֆրանսիան խառնաշփոթ վիճակի մէջ էր եւ շատերը ինձ խորհուրդ տւին մնալ Իտալիայում:

Լաւ աշխատում եմ: Կարեւորը այդ է:

Նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս:

Զերմ բարեւեռով:

Կ. Զարեան

Գ.

8-2-58

Via Aurelia Orient S. Rocco

Rapallo

Սիրելի Զարդարեան

Զեր նամակը ժամանակին ստացայ եւ նաեւ ձեր ղրկած «Ամսօրեակը»¹⁴, որ՝ հետաքրքրած՝ կարդացի: Անտարակոյս, արտահայաստանեան հայութիւնը՝ պղտոր, ճահճային մի շրջան անցնելուց յետոյ՝ հիմա մտել է տար[ր]ալուծման, փոշիացման վերջին մի շրջան: Ի՞նչ կարելի է անել դրա դէմ՝ շփտեմ: Ժողով[ու]րդների ճակատագիրը մեզ մնում է անյայտ: Ոչ միայն արտաքին թշնամիները, այլ ինքը հայութիւնը ինքը իրեն հանդէպ միշտ էլ գայլ է եղել՝ կերել է իր սեփական մսերը: Մեր կեանքի պատմութեան ամէն մի էջը խաւարով է ծեծւած: Մի մոռանաք՝ անցեալում մեր ժողովուրդը սատանայ է պաշտել... Ու մինչեւ հիմայ էլ, ամէն քայլափոխին, այդ սատանան մեր առջեւ ցցում է արեղայի, կուսակցականի, տիրացու[ի], խանութպանի եւ քաղքենու դիմակով: Մեր հիներն էլ՝ խորենացիները, Գաւիթ Անյաղթները, Արովեանները եւ շատ ուրիշները՝ նրանց ձեռքում շարշարել են: Մնում է. Fuir ce que doit et arrive que pourra.

Հայ ստեղծագործ մտաւորականի համար տեւելու առաջի պայմանն է պահել հոգեկան կապը Հայաստանի հետ: Իրեն չզգալ գաղթական այլ տարագիր: Լրացնել այնտեղի հայութեան գործը, անել այն ինչ որ քաղաքական պատճառներով նրանք ի վիճակի չեն անելու: Պատրաստել վաղւայ հանդիպումին: Պատրաստել տուն վերադառնալու լեցուն ձեռքերով, մաքուր դէմքով, պայծառ աչքերով: Faire en se faisant.

«Ամսօրեակը», ուր հանդիպեցի ուրախութեամբ իմ նախկին աշակերտ Որբունուն¹⁵, առայժմ, վանդակից դուրս պրծած թույնների մի խմբի է նրմանում: Վազում եմ բոլոր ուղղութիւններով: Ամենայն դէպս, մաղթում եմ ձեզ յաջողութիւն: Մի օր, եթէ կարողացանք տեսնել, այդ հարցերի մասին երկայն կխօսենք:

Նս, ամբողջովին մխրճւած եմ իմ աշխատութիւններիս մէջ եւ եթէ ուժերս թոյլ տան, որ վերջացնեմ՝ երախտապարտ կլինեմ նախախնամութեան:

Ահա, շնորհակալ կլինեմ եթէ ինձ թերթ եւ գիրք ղրկէք:

Շատ ջերմ բարեւեռով

Կ. Զարեան

¹⁴ «Ամսօրեակ» (1958), Ֆրանսահայ ամսաթերթ (խմբագիրներ՝ Գրիգոր Զիզմէճեան եւ Զ. Որբունի):

¹⁵ Զարեան Որբունի (1902—1980), Ֆրանսահայ վիպագիր: Զարեանին աշակերտած է Կեդրոնական վարժարանին մէջ, Պուիս, 1922ին:

ВАРДАН МАТТЕОСЯН (Буэнос-Айрес)—Страницы из переписки Костана Заряна.— В течение своей долгой жизни один из крупных представителей армянской литературы XX в. Костан Зарян (1885—1969) вел переписку с известными отечественными и зарубежными армянскими деятелями культуры. Большинство посланных и полученных им писем к сожалению, утеряно. Публикуемые проливают свет на незнакомые доньше стороны жизни и творчества писателя. Письма разделены на два цикла: адресованные ирано-армянскому поэту Деву (Маркар Крабекян, 1901—1975) и франко-армянскому романисту Грачья Зардаряну (1896—1986).